ՄՈՒՇԵՂ ԼԱԼԱՅԱՆ, Ազգային գաղափարախոսության խնդիրների շուրջ (երկրորդ՝ լրացված և բարեփոխված հրատարակություն), Ե., «Հայրենիք» ակումբ, 2008, 103 էջ։

Օրավուր փոփոխվող և գլոբալացվող աշխարհում միտումնավոր կամ ակամա անտեսվում, մոռացության են տրվում կամ այլակերպվում են մի շարք արժեքներ և արժեհամակարգեր։ Եվ եթե մեծ ազգերի ու կայացած պետությունների համար դրանց հասցրած վնասը աննշան է կամ անվտանգ, ապա բարդ տարածաշրջանում ապրող և բազմաթիվ լուրջ խնդիրներ ունեցող մեր ազգի համար այն հղի է լուրջ և անկասելի հետևանքներով։ Այս ամենն էլ ավելի վտանգավոր է դառնում, երբ առնչվում է ամենակարևոր հիմքերից մեկին՝ Ազգային գաղափարախոսությանը։ Ինչպես մի շարք այլ արժեքներ, Ազգային գաղափարախոսությունը ևս նորանկախ Հայաստանում ենթարկվեց տարատեսակ փորձությունների՝ սկսած «կեղծ կատեգորիա» հռչակվելուց մինչև անտեսվելը։ Մինչդեռ Ազգային գաղափարախոսությունը կարևոր հիմք և ուղեցույց կարող էր դառնալ հայերիս համար առկա և առաջիկայում ի հայտ գալիք բազմաթիվ դժվարությունները հաղթահարելու համար։ Ազգային գաղափարախոսությունը կարծրացած և անշարժ չէ, հակառակը՝ ճկուն է և շարժուն. ժամանակի թելադրած մարտահրավերներին համապատասխան կարող է փոխել առաջնահերթությունները, այն է՝ ազգային գաղափարը։

Այս բնագավառի մշակներից մեկի՝ Մուշեղ Լալայանի վերջին աշխատությունն անդրադառնում է հիշյալ խնդրին, ինչպես նաև դրան առնչվող այլ հարցերի։ Նշենք, որ աշխատության կարևոր արժանիքներից մեկը՝ մատչելի լեզվով շարադրանքը, հատկապես կարևոր է, եթե հաշվի առնենք ընդհանրապես թեմայի վերաբերյալ առկա գրականության բարդ լեզուն և դժվարամատչելի սահմանումները։ Գիրքն ասես յուրահատուկ համառոտ հանրագիտարան է, որտեղ գրեթե սպառիչ պատասխաններ են տրված Ազգային գաղափարախոսությամբ հետաքրքրվողներին։ Ամենասկզբում տրված սահմանումն արդեն սպառիչ պատասխան է «կեղծ կատեգորիայի» դրույթի ջատագովներին. «Յուրաքանչյուր կենսունակ՝ իր առաքելության գիտակցումն ունեցող ազգ, ելնելով սեփական աշխարհըմբռնումից, սահմանում է իր արժեքների համակարգը, նպատակներն ու իղձերը, նախանշում իր հարատևման ռազմավարությունը, որոնց տեսաբանված ամբողջությունը հանդես է գալիս իբրև տվյալ ազգի գաղափարախոսություն։ Այն նրա համար դառնում է մի տեսակ Ավետարան, որով նա առաջնորդվում է իր գոյության ընթացքում» (էջ 3)։ Չունենալով կամ անտեսելով ազգային գաղափարախոսությունը՝ մեր ազգը հավաքական առումով դառնում է անսկզբունք, առանց իղձերի, նպատակների, և այս պայմաններում գերակա են դառնում սեփական իղձերը, ցանկությունները, որոնք վեր են դասվում նաև Ազգի և Հայրենիքի շահերից և երբեմն էլ նույնիսկ հակասում դրանց։ Մինչդեռ Ազգային գաղափարախոսությունը՝ շնորհիվ նաև իր ճկունության, կենսունակ է և ի զորու է դառնալ բոլորիս իղձերն ամփոփող սահմանադրություն։ Մ. Լալա-յանը դիպուկ նկատում է, որ Ազգային գաղափարախոսությունը բազմաշերտ է և ընդգրկում է «և՛ Այբուբենը, և՛ Էպոսը, և՛ հայոց Աստվածաճանաչությունը, և՛ Ցեղակրոնությունը, և՛ Տարոնականությունը... և՛ ապագայում ստեղծվելիք արժեքավորը (ընդգծումը մերն է - Մ. Ռ.) (էջ 3)։ «Ազգային գաղափարախոսության հիմքում չեն կարող դրվել ներմուծված արժեքներ, օտար ուսմունքներ կամ դրանց պատճենումները, քանզի մի ազգի հարատևումը իրականանալի է միայն սեփական, այլ ոչ փոխառյալ գաղափարներով» (էջ 13)։

Ազգային գաղափարախոսության սահմանումն ավելի ընկալելի դարձնելու համար հեղինակը գրում է. «Ազգային գաղափարախոսությունը, մեկ այլ ձևակերպմամբ, այդ ընդհանրական՝ Ազգի անդամներին իրար հոգեպես կամ գիտակցորեն կապող, շաղկապող գաղափարների ու արժեքների համակարգն է» (էջ 4)։ Ազգային գաղափարախոսությունը, ըստ Մ. Լալայանի, գոյություն է ունեցել ի սկզբանե՝ ազգի ծննդի հետ, և կարևոր է ոչ այնքան այն ստեղծելը, որքան ճանաչելը, ինչին էլ, մեր կարծիքով, միտված է այս աշխատությունը։ Տեսական խնդիրներից անցում կատարելով գործնականին, ավելի կոնկրետ՝ մեր օրերին, Մուշեղ Լալայանն անդրադառնում է Ազգային գաղափարախոսության արդի վիճակին և շեշտում, որ դրա հետ կապված 20-ամյա քննարկումներն ասես մտել են փակուղի։ Լինելով իրատես և ձգտելով իրականությունը ներկայացնել ոչ միայն դրական, այլև առկա բացասական կողմերով՝ հեղինակը գրում է. «ՀՀ առաջին իշխանության կողմից այն (Ազգային գաղափարախոսությունը - Ռ. Մ.) միանշանակորեն մերժվում էր։ Հաջորդ իշխանության համար Ազգային գաղափարախոսության խնդիրն օրակարգի հարց չդարձավ» (էջ 6)։ Մեր այսօրվա իրականության շատ ու շատ բացասական կողմեր Մ. Լալայանը պայմանավորում է հենց Ազգային գաղափարախոսության անտեսմամբ կամ մերժմամբ, այսինքն՝ քաղաքացին չունի այն արժեհամակարգը, այն տեսլականը, համաձայն որի և որի համար նա պետք է հայ մնա, ապրի Հայրենիքում, պայքարի դրա համար, լինի լավ քաղաքացի և այլն։ Հայաստանյան քաղաքական և մտավոր ընտրանուն Մ. Լալայանը կտրուկ, բայց միևնույն ժամանակ իրական գնահատական է տալիս. «Հայ կյանքում այսօր առկա ճգնաժամն, առաջին հերթին, հետևանք է մեր քաղաքական և մտավոր ընտրանու հիմնական մասի՝ օտար արժեհամակարգերից կախվածության, արժեքների սեփական համակարգ հաստատելու նրա անկարողության, որի արդյունքում՝ հայությունը, համատարած կապկումի պայմաններում, դառնում է անդիմագիծ» (էջ 6)։ Այս նույն համատեքստում խոսելով մտավորականության մասին՝ նա իրավացիորեն նկատում է, որ այդ կատեգորիան՝ որպես միմյանց ընդհանուր գաղափարով շաղկապված մարդկանց մի համախումբ, գոյություն չունի, և կան միայն անհատ մտավորականներ։ Հետաքրքիր և իրատեսական են Մ. Լալայանի գնահատականները Հայաստանի հասարակական-քաղաքական դաշտի վերաբերյալ, և այդ որակումներից մի քա-նիսը կարելի է մեկնաբանել նաև որպես ինքնաքննադատություն. «Հայաստանի այսօրվա հասարակական-քաղաքական դաշտը չի ձևավորված Ազգային գաղափարախոսության պահանջներին ու տրամաբանությանը համապատասխան։ Նույնիսկ քաղաքական այն ուժերը, որոնք սովորաբար հանդես են գալիս Ազգային գաղափարախոսության գոյության և պետականորեն անհրաժեշտ լինելու օգտին, այսօր գործի և գաղափարի ներդաշնակեցման դժվարին խնդրի առաջ են (ընդգծումը մերն է - Մ. Ռ.)» (էջ 7)։

«Ազգային գաղափարախոսությունը նաև ազգային գաղափարների համախումբ է»,- կարծում է Մ. Լալայանը, և «ազգերի պատմության անկյունաքարային ամեն ժամանակահատված առաջ է մղում մեկ կամ մի քանի գաղափարներ» (էջ 8)։ Ի դեպ, այս հանգամանքը ևս խոսում է Ազգային գաղափարախոսության ճկունության մասին։ Տարբեր ժամանակահատվածներում մենք ունեցել ենք տարբեր ազգային գաղափարներ՝ ելնելով ժամանակի և իրավիճակի պարտադրանքից՝ անկախություն, ազատագրական պայքար, Արցախի վերատիրում և այլն։ Մեր նորօրյա պատմությունն ունի հնարավոր և անհրաժեշտ ազգային գաղափարների կորսված օրինակներ՝ ազատագրված հայրենի տարածքների վերաբնակեցում, հայրենադարձություն և այլն։ Արդ, ո՞րն է մեր այսօրվա ազգային գաղափարը կամ ո՞րը պետք է լինի։ Այս դժվարին հարցի պատասխանը ևս տրված է Մ. Լալայանի աշխատության մեջ, որը, մեր կարծիքով, չափազանց

ճշգրիտ է. մեր այսօրվա ազգային գաղափարը պետք է լինի Հայկական դիմադրությունը՝ ընդդեմ հոգևոր-գաղափարական, քաղաքական, տնտեսական և այլ ազդեցությունների, պարտադրված օտար արժեքների, տարբեր «իզմերը» անհաջող կապկելուն, որոնք խարխլում են մեր ազգային հիմքը: Մ. Լալայանը կարծում է, որ «շատ շուտով «ընտանիք», «բարոյականություն», «ավանդույթ», «ազգ», «հայրենիք» հասկացությունները որակվելու են իբրև «հետադիմական» (էջ 10): Հեղինակի այս կանխատեսումը, մեր կարծիքով, փոքր-ինչ «լավատեսական» է, քանի որ այդ ամենի՝ որպես հետադիմական ներկայացումը և ընկալումն արդեն արմատացել ու լայն ծավալներ են ընդգրկում մեր հասարակության մեջ: Կա «ուլտրալիբերալ» մի զանգված, որի համար ոչ միայն հետադիմական են վերը նշված հասկացությունները, այլև ծիծաղելի են «ցեղակրոնություն», «տարոնականություն», «նժդեհականություն» եզրերը, որի համար ազգային խորհրդանիշներն անգամ արժեք չունեն. նրանց մի մասը լրջորեն խորհում է Արարատի՝ որպես խորհրդանիշի աննպատակահարմարության մասին, իսկ մի մասի համար Արարատն արդեն սոսկ հողի գունդ է: Ազգային հերոսները նույնպես ծաղրի և անարգանքի, անգամ ամոթի առարկա են նրանց համար. Անդրանիկը ընդամենը հրոսակապետ է, իսկ Նժդեհը՝ «հայ նացիստ»: Ազգային հերոսների և այլ ազգային արժեքների միտումնավոր ամնեզիան պատահականություն համարելն ընդամենը միամտություն է, և այս նույն համատեքստում ավելորդ չէ նշել, որ ներկայիս Թուրքիայում գտնվող Արևմտյան Հայաստանի մի շարք վայրերում բնակվող իսլամացված և ծպտյալ հայերի ու նրանց սերունդների հիշողություններում, որքան էլ զարմանալի է, այդ նույն ազգային հերոսները պահպանված են, ավելին՝ իրենց ազգային պատկանելության կամ դրա մասին հիշողության կարևոր մասնիկն են կազմում:

Մեր ազգային հիմքերի դեմ կատարվող բոլոր քողարկված և բացահայտ հար-ձակումները Մ. Լալայանը տեղավորում է ներկայումս ընթացող, սակայն հաճախ չգիտակցվող բազմոլորտ՝ տեղեկատվական, հոգևոր, տնտեսական պատերազմների համատեքստում: Այս՝ «խաղաղ պայմաններում» ընթացող պատերազմնե-րում տարբեր պատրվակներով խարխլվում է մեր հիմքը, և այս ամենի դեմ պայքարելու, բացասական հետևանքներից խուսափելու համար հեղինակը իրավացիորեն կոչ է անում դիմադրության: Միայն դիմադրությունից հետո կարող ենք փորձեր անել դուրս գալու անորոշությունից: Ցավալի է, որ մեր այսօրվա ազգային գաղափար ենք հռչակում դիմադրությունը, այլ ոչ թե ավելի շոշափելի արդյունք ունեցող կամ ավելի վեհ գաղափար, սակայն դրանք են մեզ պարտադրված պայմանները: Այն, որ այդ տարատեսակ պատերազմներն ընթանում են թվացյալ խաղաղության պայմաններում, էլ ավելի է թուլացնում մեր զգոնությունը: Այս ամենը մեզ մղում է հոգեկան ամլության, և հենց դրա դեմն առնելու համար Մ. Լալայանը դիմում է գուցե և փոքր-ինչ ծայրահեղ բնորոշման ու թուրքերի հետ մեր հարաբերությունները հատկապես հայրենատիրության համատեքստում տեսնում է անխուսափելի բախման միջոցով. «Այո, բախումով, քանզի մնացած ճանապարհները պատմությամբ արդարացված չեն: Եվ «խաղաղ գոյակցության» անարժեք քարոզները միայն մեզ կարող են խաբել, բայց ոչ թուրքին» (էջ 17): Ի դեպ, անդրադառնալով հայության առաջնային խնդիրներից հայրենատիրությանը և 1915 թ. ցեղասպանությանը՝ հեղինակը դրանց տալիս է մի բացատրություն, որն աչքի է ընկնում և՛ իր յուրօրինակությամբ, և՛, Մ. Լալայանի բառերով ասած՝ «հայրենազգաց հայորդիների» համար ընկալելի լինելով. «Կորսված հայրենիք տենչալով՝ մենք ոչ թե բաղձում ենք տնտեսական կամ այլ կարգի շահավետություն, այլ՝ նախ և առաջ աղճատված էության ամբողջացում» (էջ 20): «Մենք ասում ենք. 1915-ը մեզ համար սոսկ ողբերգանք չէ, այլ, առաջին հերթին, Հայրենիքի տենչ» (էջ 73): Մեր բնօրրանի 1/10 մա-սում սեղմված ապրելը, ըստ հեղինակի իրավացի դիտարկման, աղճատում է մեր

էության ամբողջականությունը: Եվ իրոք, մեզանում հայրենիքի մի մասի կորստի տրավմատիկ հիշողությունը փոխանցվում է սերնդեսերունդ, երբեմն նաև ուռճացվում ու բացարձակացվում, նույնիսկ հասնում առասպելացման: Այս ամենը վկայում է, որ դրանք սոսկ տարածքներ չեն, այլ մեր էության բաղադրիչները, որոնց կորուստը շարունակ հետապնդելու է մեզ:

Նշեցինք, որ աշխատությունը պատասխան է տալիս մի շարք խրթին հարցերի կամ որոշակիորեն կողմնորոշում այդ հարցերի պատասխանները որոնողներին: Նմանօրինակ խնդիրներից է Ազգային գաղափարախոսության, եթե կարելի է ասել, հետադիմական, ժամանակի ռիթմից դուրս քայլելու հարցը: Շատերը դա համարում են անցած փուլ և համեմատում ատոմային դարում նետ ու աղեղով կռվելու կոչի հետ: Սակայն այս ամենի սպառիչ պատասխանը ևս տրվում է աշխատության մեջ. «Անշուշտ, ազգային ինքնատիպությունը չի ենթադրում աշ-խարհից մեկուսացում կամ ազգային եսականություն» (էջ 38): «Այսպիսով, թեև բոլոր ազգերը՝ իբրև Արարչի ծնունդ, Հավերժի և Բացարձակի հարթության մեջ մերձենում են, սակայն յուրաքանչյուրն ունի դեպի Արարիչ տանող իր ճանապարհը, իսկ ավելի ստույգ՝ իրեն տրված ճանապարհը» (էջ 39): Այսինքն՝ սա կարելի է բնութագրել իբրև կոչ՝ պահելով ազգային յուրահատկությունները, պահանջել հարգանք դրանց հանդեպ և շփում այլոց հետ՝ ազգայինը պահելով, արժանապատիվ հարաբերություններ, որևէ մեկից չգերադասելով և չթերագնահատելով ինքներս մեզ: Մ. Լալայանի ձևակերպմամբ՝ «Ազգերի մշակութային մերձեցում (բայց ոչ ձուլում), գիտատեխնիկական, տնտեսական միավորում (և ոչ մեկուսացում), այսինքն՝ հոգևոր մշակութային ինքնատիպություն և քաղաքակրթական ընդհանրություն. այսպես ենք մենք հասկանում աշխարհի բնական կարգը, այսպիսին է ազգայինի և համամարդկայինի մեր ընկալումը» (էջ 39): Հեղինակի դիպուկ բնորոշմամբ՝ Ազգային գաղափարախոսությունը պետք է խարխսվի ոչ թե օտարատյացության, այլամերժության, այլ՝ հայրենապաշտության, այսինքն՝ առողջ ազգայնականության հիմքի վրա (էջ 40):

Այսօր շատերը, նաև մամուլում գաղափարականներին կամ գաղափարականությունը վերցնում են չակերտների մեջ և սրա համար երբեմն ունեն նաև օբյեկտիվ պատճառներ: Սակայն միանշանակ մերժելի է առանձին մարդկանց ոչ գաղափարական նկարագիրը կամ դրա քողի տակ այլ նպատակներ հետապնդելը վերագրել ամբողջ գաղափարին կամ գաղափարականությանը: Սա, անկասկած, խայծ է, որի մասին Մ. Լալայանը գրում է. «Սակայն մեզանում գաղափարականությունը համարել ռոմանտիզմ՝ կնշանակի դրսի քարոզչական տեխնոլոգիաների ծուղակն ընկնել, որոնց խնդիրներից է՝ իրապաշտության (ռեալիզմ) կամ գործապաշտության (պրագմատիզմ) անվան տակ՝ մարդկանց գաղափարների, իդեալների դաշտից կտրելը» (էջ 65):

Որպես գրքի ամփոփում և առաջիկա գործողությունների ուղենիշ է նշվում երկրի հոգեբարոյական վերանորոգման, նոր արժեքների հաստատման, այսինքն՝ արմատական-համակարգային փոփոխությունների անհրաժեշտությունը, իսկ դրա համար հարկ է նախ փոխել հասարակության արժեքային համակարգը:

ՄԵԼՔՈՆՅԱՆ Ռ. Հ.
Բանասիրական գիտությունների թեկնածու